ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 նոյեմբերի 2022թ. N 293-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի 66-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ***որոշում եմ***՝

1. Հիմք ընդունելով Ջերմուկ համայնքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատեր ընտրելու մրցութային հանձնաժողովի՝ ս/թ նոյեմբերի 25-ի N 4 արձանագրությունը՝ Ջերմուկ համայնքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատեր ընտրելու մրցույթը համարել չկայացած:

2. Ջերմուկ համայնքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատեր ընտրելու նպատակով ստեղծված մրցութային հանձնաժողովին՝ մինչև նոր մրցույթ անցկացնելը Ջերմուկ համայնքի ներհամայնքային միկրոավտոբուսային երթուղու ժամանակավոր սպասարկումը իրականացնելու համար իրավունքի տրամադրման նպատակով համայնքապետարանի պաշտոնական կայքէջում հրապարակել հայտարարություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 թ. նոյեմբերի 25
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբերի 2022թ. N 294-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ (ՊԱՇՏՈՆԻ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 2.3-6) ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3–րդ և 10-րդ հոդվածի 1-ին մասերով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 3152-Ա հրամանով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում կատարված լրացմանը համապատասխան՝ ***որոշում եմ***՝

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2008 թվականի դեկտեմբերի 4-ի N 04-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի յուրաքանչյուր ենթախմբի ընդհանուր նկարագրի հիման վրա հաստատել Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի պաշտոնի անձնագիրը (ծածկագիր՝ 2.3-6)՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 թ. նոյեմբերի 29
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբերի 2022թ. N 295-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղարի՝ ս/թ նոյեմբերի 14-ի դիմումը (մտից N 1778, 28.11.2022 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը Հ-43 (Մ-2) Գնդեվազ–Ջերմուկ–Արցախի Հանրապետության սահման հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0-000-ում ջրահեռացման ապահովման. կմ0-900-ում փլուզված հատվածի և կմ18-250-կմ18-360 նստվածքային հատվածի վերականգնման աշխատանքների իրականացման համար տալ շինարարության թույլտվություն:

2. ՀՀայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը պարտավոր է շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ Ջերմուկ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 թ. նոյեմբերի 29
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբերի 2022 թ. N 296-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու մասին» N 13-Ն հրամանով հաստատված կարգի 11-րդ կետով՝ ***որոշում եմ***՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացնել մրցույթներ.

1) աշխատակազմի գլխավոր մասնագետի (պաշտոնի ծածկագիրը՝ 2.3-6)

2) աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետի (պաշտոնի ծածկագիրը՝ 2.3-1)

2. Սույն որոշման առաջին կետում նշված մրցույթների օր նշանակել 2023 թվականի հունվարի 10-ը:

3. Հանձնարարել աշխատակազմի քարտուղարին՝ սահմանված կարգով ապահովել սույն որոշման առաջին կետում նշված մրցույթների անցկացման մասին հայտարարությունների հրապարակումը և նախապատրաստական աշխատանքների իրականացումը: Հայտարարությունների տեքստերը՝ համաձայն հավելվածի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 թ. նոյեմբերի 29
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 դեկտեմբերի 2022թ. N 297-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 25-Ի N 182-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «ննքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման 3-րդ կետով՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2022 թվականի հուլիսի 25-ի «Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ջիվանի փողոցի վրա գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառուցված շինությունը համայնքի սեփականություն համարելու, օրինականացնելու և հասցե տրամադրելու մասին» N 182-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝ որոշման 1-ին կետում «օրինական» բառից հետո ավելացնել «՝փոփոխված համարելով հողամասի գործառնական նշանակությունը որպես բնակելի կառուցապատման հողամասի» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակման օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 թ. դեկտեմբերի 1
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 դեկտեմբերի 2022թ. N 298-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍԻ 6-ՐԴ ՓՈՂՈՑԻ N 6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն), Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման, հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ էդգար Խամբոյի Ղազարյանի դիմումները (մտից N 123՝ 26.01.2021 թ. և N 1780՝ 29.11.2022 թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2022 թվականի նոյեմբերի 22-ի N 22112022-10-0008 վկայական) Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 6-րդ փողոցի N 6 հասցեում գտնվող 30 քառակուսի մետր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 41,94 քմ) ավտոտնակը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 30 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Ջերմուկ քաղաքի բնակիչ էդգար Խամբոյի Ղազարյանին:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1100 (հազար հարյուր) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.11).

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 810 (ութ հարյուր տաս) դրամ:

4. էդգար Խամբոյի Ղազարյանը պարտավոր է վճարել՝

1) համայնքապետարանի 900365000042 հաշվեհամարին՝46 200 (քառասունվեց հազար երկու հարյուր) դրամ՝ շինության գինը,

2) համայնքապետարանի 900365031625 հաշվեհամարին՝24 300 (քսանչորս հազար երեք հարյուր) դրամ՝ հողամասի գինը:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է էդգար Խամբոյի Ղազարյանի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում էդգար Խամբոյի Ղազարյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 թ. դեկտեմբերի 1
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 դեկտեմբերի 2022թ. N 299-Ա

ՀԱՆԳՈՒՅՑԱԼ ԿՈՐՅՈՒՆ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ՝ ԱՎՏՈԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ԿԱՅԱՆԻՆ, ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով և հաշվի առնելով հանգուցյալ Կորյուն Ստեփանյանի իրավահաջորդ Սենիկ Կորյունի Ստեփանյանի դիմումը (մտից N 1796, 02.12.2022 թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի նախկին բնակիչ հանգուցյալ Կորյուն Ստեփանյանին սեփականության իրավունքով պատկանող Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի սկզբնամասում գտնվող 31 քմ մակերեսով անշարժ գույքին՝ ավտոլիցքավորման կայանին, տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, քաղաք Ջերմուկ, Երևանյան խճուղի N 7 շինություն:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 թ. դեկտեմբերի 5
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 դեկտեմբերի 2022թ. N 300-Ա

ԱՐԹՈՒՐ ՋԱԽԱՐՅԱՆԻ, ՎԻԳԵՆ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ԵՎ ԷԴՈՒԱՐԴ ՋՈՀՐԱԲՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԳԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի, 275-283-րդ, 219.1-րդ և 305-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ, 58-60-րդ հոդվածների, հիմք ընդունելով ՀՀ Ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության Ջերմուկի բաժնի ս/թ նոյեմբերի 7-ի N 84/1772 գրությունը (մտից N 1680) և Ջերմուկ համայնքի ղեկավարի՝ ս/թ նոյեմբերի 15-ի N 280-Ա որոշմամբ հարուցված վարչական վարույթի շրջանակում Ջերմուկի համայնքապետարանի վարչական վարույթ իրականացնող հանձնաժողովի 2022 թվականի դեկտեմբերի 1-ի N 3 արձանագրությունը՝ ***որոշում եմ՝***

1. Համայնքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու կանոնները խախտել համար Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի բնակիչներ Արթուր Արտավազդի Ջախարյանի, Վիգեն Քաջիկի Ղուկասյանի և Էդուարդ Նորիկի Ջոհրաբյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նշանակել վարչական տուգանք՝ 10 000–ական (տաս հազարական) դրամի չափով:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված քաղաքացիները պարտավոր են սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 15-օրյա ժամկետում նշանակված տուգանքի գումարը մուծել Ջերմուկի համայնքապետարանի 900365031187 հաշվեհամարին և վճարման անդորրագիրը ներկայացնել Ջերմուկի համայնքապետարանի վարչական վարույթ իրականացնող հանձնաժողովին: :

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ջերմուկ համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման 1-ին կետում նշված քաղաքացիներին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 թ. դեկտեմբերի 5
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 դեկտեմբերի 2022թ. N 301-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 13-Ի N 330-Ա, 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 13-Ի N 167-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ, 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 3-Ի N 54-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին և 37-րդ հոդվածին համապատասխան՝ ***որոշում եմ***՝

1. Ուժը կորցրած ճանաչել Ջերմուկ համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 13-ի «Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղում գտնվող՝ իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կարգավիճակի մասին» N 330-Ա որոշումը:

2. Ուժը կորցրած ճանաչել Ջերմուկ համայնքի ղեկավարի 2022 թվականի հուլիսի 13-ի «Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող GAZ KO-413 (GAZ 53) մակնիշի բեռնատար մեքենան օտարելու մասին» N 167-Ա որոշումը:

3. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2022 թվականի մարտի 3-ի «Ջերմուկ համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու և Ջերմուկ համայնքի ղեկավարի 2018 թվականի մայիսի 21-ի N 82-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 54-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետից հանել *«Սպեփանյան Ռոզա–Ջերմուկի կրթահամալիրի ուսուցչուհի»* բառերը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 թ. դեկտեմբերի 6
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 դեկտեմբերի 2022թ. N 302-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՉՈՒՏ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով՝ հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Ա. Խուրշուդյանի դիմումը (մտից N 228, 29.01.2021 թ.) և Կեչուտ գյուղի վարչական ղեկավարի կողմից 11.10.2021 թ. տրված N 3400 տեղեկանքը՝ ***որոշում եմ՝***

1. Ճանաչել Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Արմեն Սավադի Խուրշուդյանի (ծնված՝ 18.02.1961 թ.) սեփականության իրավունքը Կեչուտ գյուղի 1-ին փողոցի 4-րդ նրբանցքի վրա գտնվող անհատական բնակելի տան և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի նկատմամբ. չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ *2021TJANX9:*

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան սույն որոշման 1-ին կետում նշված 76,43 քմ ընդհանուր մակերեսով բնակելի տանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 1298,7 քմ մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, գյուղ Կեչուտ, 1-ին փողոց, 4-րդ նրբանցք, տուն 2:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված շինության և դրա կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ սահմանազատված հողամասի՝ «ԱՓԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված հողամասի հատակագիծը՝ ճանաչելով Արմեն Սավադի Խուրշուդյանի սեփականության իրավունքը նաև փաստացի առկա սահմանազատված՝ կից ավել օգտագործվող 298,7 քմ հողամասի նկատմամբ՝ ի գիտություն ընդունելով, որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատարածքներում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում:

4. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տունը կառուցվել է 1986 թվականին, այն կառուցված չէ և չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:

5. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմեն Սավադի Խուրշուդյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 թ. դեկտեմբերի 6
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 դեկտեմբերի 2022թ. N 303-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՐԹՈՒՂՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ «ՆԱՐ ՍԱՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի 69-րդ կետով՝ ***որոշում եմ՝***

1. Հաստատել 2022 թվականի դեկտեմբերի 7-ին անցկացված՝ Ջերմուկ համայնքի ներհամայնքային երթուղու սպասարկման իրավունքը ժամանակավոր հատկացնելու մրցույթի արդյունքների վերաբերյալ Ջերմուկ համայնքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատեր ընտրելու մրցութային հանձնաժողովի 08.12.2022 թ. կազմած N 7 արձանագրությունը (կցվում է):

2. Ջերմուկ համայնքում ներհամայնքային ավտոբուսային երթուղու ժամանակավոր սպասարկման իրավունքը, մինչև նոր մրցույթի անցկացումն ու դրա արդյունքների ամփոփումը, վերապահել «ՆԱՐ ՍԱՄ» ՍՊ ընկերությանը (տնօրեն՝ Մխիթար Համբարձումյան):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 թ. դեկտեմբերի 8
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 դեկտեմբերի 2022թ. N 304-Ա

ՀԱՆԳՈՒՅՑԱԼ ԿՈՐՅՈՒՆ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով և հաշվի առնելով հանգուցյալ Կորյուն Ստեփանյանի իրավահաջորդ Սենիկ Կորյունի Ստեփանյանի դիմումը (մտից N 1796, 02.12.2022 թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի նախկին բնակիչ հանգուցյալ Կորյուն Ստեփանյանին սեփականության իրավունքով պատկանող Ջերմուկ համայնքի Ձախափնյակ թաղամասի 8-րդ փողոցի վրա գտնվող անշարժ գույքին՝ համաբուժարանին և օժանդակ կառույցներին, տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, քաղաք Ջերմուկ, Ձախափնյակ թաղամաս, 8-րդ փողոց N 4 շինություն:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 թ. դեկտեմբերի 8
Ջերմուկ